

COVID-19

Աշխատանքի առողջություն և անվտանգություն: Տեղեկություն աշխատողների համար

Աշխատանքի առողջության և անվտանգության նմուշային օրենքների համաձայն՝ ձեր գործատուն իր աշխատողների և այլոց առողջության և անվտանգության նկատմամբ զգուշության պարտականություն ունի աշխատավայրում:

Ի՞նչ պետք է անեն աշխատողները

Դուք պարտավոր եք պատշաճ խնամք տանել ձեր անձնական առողջության և անվտանգության համար, և բացասաբար չազդեք ուրիշների առողջության և անվտանգության վրա:

Դուք պետք է հետևեք ցանկացած պատշաճ գործունեության ծրագրին կամ հրահանգներին, որ ձեր գործատուն կիրառում է ի պատասխան COVID-19-ին: Մա ներառում է նաև այն դեպքերը, երբ դուք աշխատում եք այլ վայրից, ինչպես օրինակ՝ տնից աշխատելը:

Ի՞նչ պետք է անեն գործատուները

Ձեր գործատուն պետք է բացահայտի աշխատանքի առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգները՝ risks՝ առաջացած COVID-19 վիրուսի ազդեցության հետևանքով, և հնարավորության դեպքում համապատասխան վերահսկողություն սահմանի: Նրանք պետք է հետևեն կառավարության հրահանգներին՝ ներառյալ համապատասխան ֆիզիկական հեռավորության [physical distancing](#) կիրառումը – աշխատավայրում բոլորին պահելով առնվազն 1.5 մետր միմյանցից ֆիզիկապես հետու:

COVID-19 վիրուսի վտանգները կարող են լինել ֆիզիկական կամ հոգեբանական-սոցիալական:

Այն, ինչ կարող է անել ձեր գործատուն կառավարելու COVID-19 վիրուսի ազդեցության վտանգները, կախված է լինելու ձեր աշխատավայրից և այն աշխատանքից, որ կատարում եք: Ձեր գործատուն պետք է ձեզ տեղեկացնի, թե ինչ է ծրագրում անել:

Նրանք կարող են.

- Միջոցներ ձեռնարկել խուսափելու անձանց միջև մոտիկ շփումը – աշխատավայրում բոլորին պահել առնվազն 1.5 մետր միմյանցից ֆիզիկապես հետու:
- քաջալերել յուրաքանչյուրին աշխատավայրում պահպանել անձնական հիգիենա՝ [good hygiene](#)՝ տրամադրելով համապատասխան հիգիենայի հարմարություններ, որպեսզի աշխատողները հնարավորություն ունենան լվանալու իրենց ձեռքերը օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան, կամ օգտագործելու ալկոհոլ պարունակող վարակազերծիչներ ձեռքերի համար:
- տրամադրել անձնական պաշտպանական սարքավորումներից օգտվելու հնարավորություն

- ավելացնել աշխատավայրի մաքրումը
- սահմանափակել մուտքը աշխատավայր այլ անձանց կողմից
- հրահանգել ձեզ աշխատելու այլ վայրից, ինչպես օրինակ՝ տնից – հաշվի առեք, որ սա կարող է փոխել, ավելացնել կամ առաջացնել աշխատանքի առողջության և անվտանգության վտանգներ՝ risks

Ի՞նչ պետք է անեն, եթե կարծում եմ, որ ունեմ COVID-19

Դուք պետք է.

- դիմեք բժշկական խորհրդատվության՝ [seek medical advice](#)
- չզնաք աշխատանքի
- տեղեկացնեք ձեր գործատուին հնարավորինս շուտ և նրանց տեղեկացնեք, եթե ձեր իրավիճակը փոխվի, օրինակ՝ եթե հաստատվի, որ դուք ունեք վիրուսը:

Ես կարո՞ղ եմ դադարեցնել աշխատելը, եթե այն վտանգավոր է

Եթե դուք մտահոգություններ ունեք ձեր անվտանգության վերաբերյալ, գրուցեք ձեր գործատուի կամ Առողջության և անվտանգության գծով ներկայացուցչի հետ:

Որոշ դեպքերում աշխատողները իրավունք ունեն դադարեցնելու կամ հրաժարվելու կատարել վտանգավոր աշխատանք: Դուք այս իրավունքը ունեք, եթե կա հիմնավորված մտահոգություն, որ ձեր առողջությունը և անվտանգությունը կենթարկվեն լուրջ վտանգի անմիջական կամ մոտալուտ վտանգավոր իրավիճակից – սա կարող է ներառել COVID-19 վիրուսի ազդեցության ենթարկվելը:

Եթե դուք դադարեցնեք աշխատելը, որովհետև այն վտանգավոր է, դուք պետք է տեղեկացնեք ձեր գործատուին հնարավորինս շուտ: Դուք նաև պետք է պատրաստ լինեք կատարել համապատասխան այլընտրանքային աշխատանք, ինչպես օրինակ՝ աշխատանք տնից:

Լրացուցիչ տեղեկություն

Աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ տեղեկության համար, այցելեք՝ [Safe Work Australia website](#)

Ձեր արձակուրդի և վճարման վերաբերյալ տեղեկության համար, այցելեք՝ [Fair Work Ombudsman](#)

Առողջության վերաբերյալ տեղեկության համար, այցելեք՝ [health.gov.au](#)

Նկատի առեք, որ Աշխատանքի առողջության և անվտանգության նմուշային օրենքները՝ model WHS laws կիրառվել են բոլոր նահանգների իրավասություններում, բացի Վիկտորիա և Արևմտյան Ավստրալիա նահանգներից: Հատուկ ձեր աշխատանքի վայրի վերաբերյալ տեղեկության համար՝ կապվեք ձեր նահանգի կամ տարածքի համապատասխան Աշխատանքի առողջության և անվտանգության կարգավորողի հետ՝ [WHS regulator in your state or territory](#):